ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 52/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ԳԲԽ-52/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 21.04.2017թ. ներկայացրած բողոքը և բողոքին կից ներկայցված փաստաթղթերը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), նույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի առարկությունները և կից ներկայացված փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 21.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից ԵՊՀ տարբեր մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից «ԵՊՀ տարբեր մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների»

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգին՝ զբաղեցնելով առաջին տեղը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ նույն օրը հեռախոսազանգ է ստացել սույն ընթացակարգի երրորդ տեղ զբաղեցրած «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ից այն պահանջով, որ Ընկերությունը դուրս գա տվյալ ընթացակարգից:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցել են երեք կազմակերպություններ:

Հայտերի բացման արդյունքում արձանագրվել է, որ «Գոռպլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում կան սխալներ և հայտը ենթակա է մերժման:

Ընկերությունը նշել է, որ «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գնային առաջարկից 14,600,000 ՀՀ դրամով ավելի թանկ գին է առաջարկել:

Այնուհետև Պատվիրատուի կողմից Ընկերությանը ուղարկվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից «ԵՊՀ տարբեր մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, որով «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել էր չկայացած:

Նշված ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքում դրվել է այն, որ ընթացակարգի մասնակից և ամենաթանկ գին առաջարկած «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ն 31.03.2017թ. ժամը 11:56-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված չեն եղել նախատեսված առանձին աշխատանքների գները: Ահազանգողը գտել է, որ Պատվիրատուի կողմից թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում՝ խնդրելով Պատվիրատուին «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

«ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝ հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 31.03.2017թ. ժամը 11:56-ին «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի կողմից ստացած ահազանգի վերաբերյալ արձանագրությունը,

«ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ստացված դիտողությունները «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հաշվի են առնվել և ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոշարադրված իրադարձությունների արդյունքում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն եկել է այն եզրակացության, որ այս բոլորը կատարվել է միտումնավոր, որպեսզի տվյալ ընթացակարգը կրկին հայտարարվի և հաղթող ճանաչվի «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն, քանի որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգին մասնակցելիս, ինչպես արդեն նշվել էր, «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գնային առաջարկից 14,600, 000 ՀՀ դրամով ավելի թանկ գին էր առաջարկել և այդ ընթացակարգով հաղթող դառնալու հնարավորություն այլևս չուներ:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Օրենքի 5-րդ հոդվածը, Օրենքի 35-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 37-րդ կետի 1-ին ենթակետը, գտնում է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 31.03.2017թ. ժամը 11:56-ին «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի կողմից ստացած ահազանգի հիման վրա «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգը հայտարարելով չկայացած, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ և 35-րդ հոդվածներով սահմանված պահանջները: Մասնավորապես, տեխնիկական խնդրի պատճառով «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգը հայտարարելով չկայացած գնահատող հանձանաժողովը նախ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն ահազանգով նշված հիմքով չէր կարող ընթացակարգը կայտարարել չկայացած և այդ հոդվածը կոչված է ապահովագրելու մասնակիցներին պատվիրատուների կողմից ընթացակարգը կամայականորեն չկայացած հայտարարելուց, որը տվյալ դեպքում առկա է: Բացի այդ, ըստ Ընկերության, նման հիմքով չկայացած հայտարարելով ընթացակարգը, գնահատող հանձնաժողովը կիոպտորեն խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացը հիմնական սկզբունքները, որի պատճառով խախտվել է նաև նույն օրենքի 5-րդ հոդվածով երաշխավորված գնման գործընթացի մասնակցության իրավունքը:

Ինչ վերաբերում է Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրված այն դրույթին, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի հրավերը պետք է պարունակի շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև ծավալաթերթ-նախահաշիվը, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքները, իսկ ըստ «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի ահազանգի, հրավերը չի պարունակել ծավալաթերթ-նախահաշվի առանձին աշխատանքների կատարման արժեքները, ապա պետք է նշել, որ հրավերը պարունակել է ծավալաթերթ-նախահաշվի կատարման ընդհանուր արժեքը և միայն ծավալաթերթ-նախահաշվի մեջ մտնող առանձին աշխատանքների արժեքները չներառելը չէր կարող հանգեցնել նշված ընթացակարգը չկայացած հայտարարելուն: Ավելին հրավերով ծավալաթերթ-նախահաշվի առանձին աշխատանքների կատարման արժեքները չնշելը (ծավալաթերթ-նախահաշվի մեջ մտնող աշխատանքների ընդհանուր արժեը նշված է եղել), «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ին չի խոչընդոտել մասնակցելու նույն գնման ընթացակարգին, և միայն այն ժամանակ, երբ «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ն առաջարկելով անհամեմատ թանկ գին, չի կարողացել դառնալ հաղթող մասնակից, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ համատեղ որոշել է օգտագործել տեխնիկական խնդիրը, կազմակերպել ահազանգ, որի արդյունքում «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգը ապօրինաբար հայտարարվել է չկայացած:

Հաշվի առնելով, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 35-րդ հոդվածները և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից «ԵՊՀ տարբեր մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), 26.04.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից թեժ գծին 31.03.2017թ ժամը 11:56-ին «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի կողմից ստացված դիտողությունները «ԵՊՀ» հիմնադրամի կողմից հաշվի էին առնվել և ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Դիտողությունը գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել են, որովհետև ծավալաթերթ-նախահաշիվը իսկապես ներկայացվել էր ոչ լիարժեք՝ առանց միավորի արժեքների, այսինքն «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով հրավերի բովանդակության մեջ նույնպես գրված է եղել ծավալաթերթ, այլ ոչ թե ծավալաթերթ-նախահաշիվ: Ծավալաթերթ-նախահաշվի սխալ լինելու հանգամանքը հանձնաժողովի կողմից ընդունվել է նաև մեկ այլ պատճառով՝ տեխնիկական վրիպակի արդյունքում հրավերին կցվել է ծավալաթերթի սևագիր տարբերակը: Այդ թյուրիմացությունը առաջացել է այն պատճառով, որ ֆինանսական միջոցների վերաբաշխման արդյունքում մշակվել է երկրորդ վերջնական ծավալաթերթ-նախահաշիվը, որը իսկական հաստատված, փորձաքննությունն անցած տարբերակից տարբերվում է նաև նրանով, որ որոշ ծավալներ հանվել են, իսկ որոշները մտցվել վերջնական ծավալաթերթ-նախահաշվի մեջ: Այդ թյուրիմացությունը պարզ է դարձել բացման նիստից հետո, երբ առաջացավ նախահաշիվների վերաբերյալ բողոքը և փորձաքննություն իրականացնող կազմակերպությանը գրությամբ դիմեցինք, որպեսզի նա տա եզրակացություն ստացված բողոքի վերաբերյալ:

Պատվիրատուն վկայակոչել է Կարգի 37-րդ կետի 1-ին և 49-րդ կետի 2-րդ ենթակետերը:

Պատվիրատուն գտնում է, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է, քանի որ սխալ ծավալներով և առանց նախահաշվի շինարարության իրականացումը կհանգեցնի ավելի մեծ խնդիրների, ուստի հանձնաժողովը որոշում է կայացրել շտկումները իրականացնելուց հետո կազմակերպել գնման նոր ընթացակարգ, իսկ գնման ընթացակարգի արդյունքում հաղթող չի որոշվել և ոչ մեկի իրավունքները չի ոտնահարվել,

ոչ մի կազմակերպության նախապատվություն չի տրվել և բարձրացված խնդիրների արդյունքում ԵՊՀ-ն խուսափել է էլ ավելի լուրջ հետևանքներից, որը կհանգեցներ կատարողականի և փորձաքննությունն անցած ծավալաթերթ-նախահաշվի անհամապատասխանության:

3. ԳԲԽ-52/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-52/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.03.2017թ. հայտարարվել է «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով չի նշվել ***աշխատանքների կատարման արժեքները***, այլ նշվել է միայն ***նախատեսվող աշխատանքների ընդամենը գումարը:***

3. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Կենտրոն) թեժ գծին «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ն 31.03.2017թ. ժամը 11:56-ին ահազանգել է և հայտնել, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված չեն եղել նախատեսված աշխատանքների գները, ինչի պայմաններում խնդրել է Պատվիրատուին պարտավորոցնել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. Պատվիրատուն 03.04.2017թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ստացված ահազանգը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հաշվի է առնվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ կից ներկայացնելով «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» գնահատող հանձնաժողովի 03.04.2017թ. թիվ 2 արձանագրությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից թեժ գծին 31.03.2017թ ժամը 11:56-ին «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի կողմից ահազանգով ներկայացված դիտողությունները «ԵՊՀ» հիմնադրամի կողմից հաշվի է առնվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի.

1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 5-րդ հոդվածը երաշխավորում է մասնակցի գնումներին մասնակցելու իրավունքը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը, ոչ մի հայտ չի ներկայացվել, պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը, իսկ շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև ***ծավալաթերթ-նախահաշիվը***, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից 28.03.2017թ. հայտարարվել է «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն:

Կենտրոնի թեժ գծին «Իմպերիալ Տուր» ՍՊԸ-ն 31.03.2017թ. ժամը 11:56-ին ահազանգել է և հայտնել, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված չեն եղել նախատեսված աշխատանքների գները, ինչի պայմաններում խնդրել է Պատվիրատուին պարտավորոցնել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, որի ի պատասխան Պատվիրատուն 03.04.2017թ. գրությամբ հայտնել է, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ստացված ահազանգը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հաշվի է առնվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ կից ներկայացնելով «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» գնահատող հանձնաժողովի 03.04.2017թ. թիվ 2 արձանագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ելնելով վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից, Խորհուրդը գտնում է, որ 31.03.2017թ. ժամը 11:56-ին «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի կողմից ստացած ահազանգի հիման վրա «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարելով չկայացած, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ և 35-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգով ահազանգով նշված հիմքով գնման ընթացակարգը չէր կարող հայտարարվել չկայացած և այդ հոդվածը կոչված է ապահովագրելու մասնակիցներին՝ պատվիրատուների կողմից ընթացակարգը կամայականորեն չկայացած հայտարարելուց, որը տվյալ դեպքում առկա է: Բացի այդ, նման հիմքով չկայացած հայտարարելով ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է նաև գնման գործընթացը հիմնական սկզբունքները, որի պատճառով խախտվել է նաև Ընկերության Օրենքի 5-րդ հոդվածով երաշխավորված գնման գործընթացի մասնակցության իրավունքը:

Ինչ վերաբերում է Կարգի 37-րդ կետի առաջին ենթակետով ամրագրված այն դրույթին, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով ընթացակարգի հրավերը պետք է պարունակի շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև ***ծավալաթերթ-նախահաշիվը***, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքները, իսկ ըստ «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ի ահազանգի, հրավերը չի պարունակել ծավալաթերթ-նախահաշվի առանձին աշխատանքների կատարման արժեքները, ապա Խորհուրդը գտնում էլ, որ հրավերը պարունակել է ծավալաթերթ-նախահաշվի կատարման ընդհանուր արժեքը և միայն ծավալաթերթ-նախահաշվի մեջ մտնող առանձին աշխատանքների արժեքները չներառելը չէր կարող հանգեցնել նշված ընթացակարգը չկայացած հայտարարելուն: Ավելին՝ հրավերով ծավալաթերթ-նախահաշվի առանձին աշխատանքների կատարման արժեքները չնշելը (ծավալաթերթ-նախահաշվի մեջ մտնող աշխատանքների ընդհանուր արժեը նշված է), չի խոչընդոտել «Իմպերիալ տուր» ՍՊԸ-ին գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքից, որպիսի պայմաններում Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 21.04.2017թ. բողոքը բավարարել՝ դադարեցնել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. ապրիլի 3-ի ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/45» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամներ՝ **Հրաչյա Ավետիսյան**

Արմինե Նամալյան